<< Սյունիքի մարզպետարանի
գենդերային հարցերով զբաղվող
մշտական հանձնաժողովի նիստի

# Արձանագրություն N1

20.03.2014թ Տեղի ունեցավ գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի նախագահ << Սյունիքի մարզպետի տեղակալ Ա.Մարդյանի ղեկավարությամբ:

## Օրակարգ

**1.Վարչապետի կողմից սահմանված <<Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>>մրցանակաբաշխության հայեցակարգի քննարկման և լավագույն համայնքների ընտրություն մասին**

**/Զեկուցող՝հանձնաժողովի անդամ Ս.Ավետիսյան/**

Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ

**Նաիրա Ավանեսյանը** - Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության .մշակույթի և սպորտի վարչության պետ

**Սեյրան Ավետիսյանը** – Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀԾ գործունեության համակարգման վարչության պետ

**Կառլեն Կոզմանովը** – Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

**Արփինե Քարամյանը** – Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց,երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

**Արամ Շահնազարյանը** - << Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության,սոցիալական ապահովության բաժնի պետ

**Ռուզաննա Տոռոզյանը** - <<Գորիսի կանանց ռեսուրս կենտրոն>>ՀԿ տնօրեն

Օրակարգի հարցը ներկայացրեց գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ Սեյրան Ավետիսյանը:Ներկայացվեց << վարչապետի կողմից սահմանված <<Լավագույն համայնք գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> մրցանակաբաշխության հայեցակարգը և համայնքներից ներկայացված հայտերը:

Այնուհետև համայնքների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը ըստ սահմանված հայեցակարգի ընտրեց որպես <<Լավագույն համայնք գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> քաղաքային՝ Մեղրի,Գորիս և գյուղական՝ Քարահունջ,Վարդանիձոր,Հացավան համայնքները:

Օրակարգի հարցի քննարկումն ամփոփեց մարզպետի տեղակալ Ա.Մարդյանը:

Որոշվեց

1.Հանձնարարել հանձնաժողովի քարտուղար Ա.Քարամյանին ընտրված քաղաքային և գյուղական համայնքների հայտերը ներկայացնել տարածքային կառավարման նախարարություն ,ինչպես նաև համայնքների ցանկը տեղադրել Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Քարամյան